ՏՈԼՍՏՈՅ *կոմս Լ.—«Ясная поляна»-ից. Կոլումբ (փոքրերի համար) Թարգմանեց Փիլիպպոս Վարդանեան։ Թիֆլիս, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, 1891 թ., 56 երես, գինն է 15 կ.։*

Շատերը գիտեն, որ Ամերիկայի գտնողը Կոլումբն է, բայց այդ շատերից ոչ ամենքը ծանօթ են այս նշանաւոր մարդու կեանքի և գործունէութեան հետ։ Ծանօթացնել դորա հետ փոքրիկներին, ահա վերև լիշած գրքի նպատակը, մի նպատակ, որը աւելի տեղին է մեղանում, երբ մեր ծիսական դպրոցներում պատմութիւնը ալ ևս չէ դասաւանդւում։ Հեղինակի, Լ. Տոլստոյի անունը, արդէն գրաւական է գրքի հետաքրքիր լինելուն և իրօք նա մեծ հետաքրքրութեամբ կը կարդացւի ոչ միայն փոքրերի, այլ նոյն իսկ և չափահասների կողմից։ Բայց, հետաքրքրութիւնից դուրս, գրքից պէտք է պահանջել ճշտութիւն, այս դէպքում պատմական իրողութիւնների ճշտութիւն։ Այս կողմից Լ. Տոլստոյի գիրքը ներկայացնում է մի քանի թերութիւններ։ Ի՞նչի էր ձգտում Կոլումբը և ինչից առաջ եկաւ նորա այդ ձգտումը։ Այս հարցերին, իբրև պատասխան, գրքոյկը պատմում է հետևեալը. «Կոլումբը ճանապարհորդելու մեծ սէր ունէր. մի կղզի որ հասան, այնտեղի մարդիկը ասացին Կոլումբին. քամին շատ անգամ այնպիսի ծառեր է բերում դէպի մեր ափը, որոնց նմանը բնաւ չես տեսնիլ մեր երկրում։ Մի օր էլ երկու մեռած մարդիկ բերուեցին այս կողմը. նրանց մորթի գոյնը մերինին նման չէր, ուրիշ երկրից կը լինին։ Կոլումբը լսեց այդ բոլորն ու մտածեց.—արդեօք այդ ինչ մարդիկ էին և ինչ տեսակ ծառեր էին. չը լինի թէ ծովի միւս կողմը մի ուրիշ երկիր գտնւի և այդ ծառերն ու մարդիկն այն տեղից դէպը բերած լինին։ Ե՛կ որոնեմ այդ երկիրը, գուցէ գտնեմ (եր. 5)»։ Մի քանի տարիներից յետոյ, երբ նա արդէն գտել էր նոր աշխարհը, Կոլումբը ասում է թագաւորին. «Տէ՛ր արքայ, եթէ չես կամենում որ ես գնամ նոր աշխարհը, դոնէ թոյլ տուր որ մի ուրիշ ճանապարհ գտնեմ դէպի Վեստ-Ինդեան (արևմտեան Հնդկաստանը)»։

Այստեղ ինչ որ միտք կայ կամ սխալ է, կամ թերի։ Ամենից առաջ Կոլումբի ձգտումների մէջ չէր մտնում գտնել մի նոր, անլայտ աշխարհ։ Բոլորը, ինչին նա ձգտում էր այն էր՝ գտնել Հնդկաստան տանող մի ուրիշ, աւելի կարճ ճանապարհ, որը փոխարինէր գոյութիւն ունեցող սովորական ճանապարհը։ Ու նոյն իսկ նոր երկիր գտնելուց յետոյ «նա մեռաւ այն սխալ համոզմունքով, թէ նրան աջողուել է իրագործել իւր երազները, թէ արևելք տանող ճանապարհը գտնւած է, թէ Կուբա կղզին Չինաստանի նահանգներից մէկն է և թէ Կարաիբեան և Բէնգալեան ծոցերը, որոնց մէջ ընկած է մի ամբողջ մայր աշխարհ, բաժանւած են իրարից միայն մի

փոքրիկ պարանոցով։ Այն մարդը, որ գտաւ Ամերիկան, մեռաւ, չը նախազգալով իւր գիւտը,—դուցէ, նա խոր կերպով կ'ընկճուէր հոգով, եթէ լաղթուած Ովկիանոսի ետևից լանկարծ կանգնէր նորա առաջ մի նոր մեծ աշխարհ, որը բռնէր նորա ճանապարհը, ցրելով նորա սիրելի երազը—միացնել ծովային ճանապարհով Արևմուտքը Արևելքի քաղաքակրթուած երկիրների հետ։» (Хрестоматія Гуревича եր. 129)։

Այնպիսի սխալ անելուց լետոյ, հեղինակը թոյլ է տալիս իրան և մի ուրիշ թերութիւն. նա չէ բացատրում, ինչու Կոլումբը իւր գնացքը ուղղեց դէպի արևմուտք. ճիշտ է նա իմացաւ, որ մի կղզու բնակիչներ ովկիանոսի ափին գտել են անլայտ ծառեր և ուրիշ մորթի ունեցող մարդկանց դիակներ. բայց չէ որ Կոլումբը գիտնական մարդ էր. նա գիտէր, որ ովկիանոսում կան զանազան հոսանքներ և այդ առարկաները կարող էին բերուած լինել թէ արևմուտքից և թէ հարաւից. ապա ինչու նա ուղևորուեց միայն դէպի արևմուտք։ Այսպիսի մի հարց չէր կարող լինել, եթէ հեղինակը բացատրէր Կոլումբի թէորիան, որը, հակառակ ժամանակակից գիտնականների մեծամասնութեան՝ պնդում էր երկու միտք, մէկը ճիշտ և միւսը սխալ. թէ աշխարհն կոլոր ձև ունի և ուրեմն արևելքից գնալով կարելի է հասնել նորից արևելք, և թէ Եւրոպայի ու Աֆրիկայի արևմտեան ափերը բամանուած են Ասիայից ովկիանոսի իբր թէ մի փոքրիկ տարածութիւնով։ Այս բոլորը հարկաւոր էր և կարելի էր բացատրել նոյն իսկ փոքրիկներին։

Բացի վերև բերուածից, գիրքը ունի և ուրիշ թերութիւններ. օրին. այն հարցին, թէ երբ էր ապրում Կոլումբը, պատասխանում է այսպէս. «Մեզնից երեք հարիւր տարի առաջ Իտալիայի Գէնուա քաղաքում ապրում էր Կոլումբ անունով մի մարդ։» (եր. 1)։ Սրանից ընթերցողները իրաւունք ունին եզրակացնելու, որ Կոլումբը ապրում էր 1590-ական թուականներին, մինչդեռ նոյն իսկ օրացոյց կարդացողներին լայտնի է, որ Կոլումբը ծնուել է 1436—1437 թ. և Ամիրիկայի գիւտը եղել է միայն 1492 թ.։ Ուրեմն 100—150 տարին զոհ է գնացել հեղինակի բանաստեղծական ոգևորութեանը։

Պ. Վարդանեանի նման թարգմանչից պէտք էր պահանջել, որ փոքր ինչ կրիտիկաբար վերաբերուէր դէպի թարգմանութեան նիւթը։

Բ.